ՀՀ ԿԳՆ «ԵՐԵՎԱՆԻ «ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑԻ» ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ» ՊՈԱԿ
«MKHITAR SEBASTATSI» EDUCATIONAL COMPLEX
MINISTRY OF SCIENCE AND EDUCATION OF THE REPUBLIC OF ARMENIA
0064, Երևան. Ռաֆֆու 57 հեռ: (374 10) 74 72 46. (374 91) 43 10 99 info@mskh.am www.mskh.am
Raffy 57.Yerevan, tel:(374 10)74 72 46.(374 91)43 10 99 https://www.facebook.com/mxitar.sebastaci?fref=ts

17-05-208 29. 05.2017թ.

ՀՀ ԿԳ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Լ. ՄԿՐՏՉՅԱՆԻՆ

Հարգելի նախարար.

Ներկայացնում ենք կրթահամալիրի՝ հանրային, բաց, ամբողջական ներառական համալիր-դպրոցի տնտեսության ֆինանսական՝ Ձեր ուշադրությանն արժանացած կազմակերպումը՝ որպես հեղինակային կրթական ծրագրով ձեռքբերում՝ անհրաժեշտ կրթահամալիրի պահպանման, զարգացման և որպես մոդել տարածման համար (ամբողջությամբ կամ առանձին բաղկացուցիչներով):

ՀՀ կառավարության 2003թ. փետրվարի 27-ի հ. 361 որոշմամբ «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ձեռնարկությունը վերակազմավորվել է «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» պետական ոչ առևտրային կազմակերպության: ՀՀ ԿԳ նախարարի 2003թ. ապրիլի 25-ի հ. 259-Ն հրամանով հաստատվել է «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ի կանոնադրությունը, որում ամրագրված են ՀՀ կառավարության 10.05.1990թ. N216 որոշմամբ հաստատված՝ կրթահամալիրի գործունեության առարկան և նպատակները. «*նախադպրոցական, ընդհանուր տարրական, հիմնական, միջնակարգ, հատուկ (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) նախամասնագիտական (արհեստագործական), միջին մասնագիտական, արտադպրոցական (նախասիրական, լրացուցիչ) կրթական ծրագրերի իրականացում* », «*ազգային դպրոցի հարուստ ավանդույթների վերածնունդը, առաջավոր կրթական, այդ թվում՝ կրթահամալիրի հետազոտող մանկավարժների մշակած մոտեցումների ներդրումը, նախադպրոցական, հանրակրթական, նախամասնագիտական, միջին մասնագիտական և լրացուցիչ կրթության հաստատությունների հնարավորությունների համախմբում՝ ընդհանուր,*

հատուկ (այդ թվում՝ առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող և արտակարգ ընդունակություններ դրսևորած երեխաների) և լրացուցիչ կրթության ինտեգրացումը ապահովելու նպատակով»:

Մինչև 2005թ. կրթահամալիրը հիմնադրի կողմից սահմանված կարգով ֆինանսավորվել է իր կանոնադրությամբ որոշված առարկային ու խնդիրներին, կառուցվածքին համապատասխան: Հանրապետությունում սովորողների թվով ֆինանսավորման անցնելուց հետո հիմնադիրը՝ ՀՀ կառավարությունը, կրթահամալիրի կանոնադրական գործունեության անընդհատությունը, կրթահամալիրի զարգացումը նոր պայմաններու ապահովելու համար առ այսօր կրթահամալիրին ֆինանսավորում է հետևյալ կարգով.

- հանրակրթության (կրթահամալիրի հանրակրթական դպրոցների պահպանության և ուսուցման ծախսեր), միջին մասնագիտական կրթության, նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության ծրագրերով, ներառական ուսուցման ծրագրով (կրթահամալիրի հանրակրթական դպրոցներում ընդգրկված առանձնահատուկ պայմանների կարիքով սովորողների թվով).
- ՀՀ պետական միջնաժամկետ ծախսային ծրագրերով, հանրակրթական ծրագրերի իրականացման օժանդակության շրջանակներում, որպես պետական աջակցություն, կրթահամալիրում իրականացվող պետական այլընտրանքային (հեղինակային) մանկավարժության ծրագրերի, կրթահամալիրի կրտսեր դպրոց-պարտեզներում նախադպրոցական ուսուցման, լրացուցիչ կրթության՝ օժտվածության զարգացման բաց համակարգի պահպանման համար:

Պետական աջակցությամբ իրականացվող ամենամյա այս ծրագրերը 2009 թվականից, պահպանելով իրենց ինքնուրույնությունը, հիմնադրի կողմից միավորվել են «Փորձարարական մանկավարժության ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագրում: Ամեն տարի նախարարություն է ներկայացվել սահմանված ձևի հաշվետվություն՝ այս ծրագրերի աշխատանքների ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների մասին: Պետական աջակցությունն ընդարձակելու համար կրթահամալիրն ամեն տարի սահմանված կարգով նոր առաջարկներ է ներկայացրել ՀՀ ԿԳ նախարարություն՝ նախարարության ՄԺԾԾ հայտում

ընդգրկելու համար, որոնք, ցավոք, չեն հաստատվել: Ինչպես և 1990թ. հետո կրթահամալիրի մասնաշենքերից ոչ մեկը չի ընդգրկվել կրթական օբյեկտների հիմնանորոգման պետական ծրագրերում, չնայած ամենամյա մեր պատշաճ ներկայացրած հայտերի:

Կրթահամալիրում հեղինակային կրթական ծրագրերի մշակման, իրականացման, տարածման համար անհրաժեշտ, ծրագրերով որոշված մյուս աշխատանքները (կրթահամալիրի կանոնադրական գործունեության ուղղություններ)՝ հեղինակային կրթական ծրագրի և սովորողի անհատական ուսումնական պլաններով, սովորողի-սանի ուսումնառության պայմանագրով որոշված լրացուցիչ կրթական ծառայություններ, սննդի կազմակերպում, երկարօրյա ուսուցում, լրացուցիչ կրթություն, ուսուցման հեղինակային ծրագրով որոշված պայմանների, այդ թվում՝ մեդիակրթության ապահովում, կազմակերպվում են ուսումնառության պայմանագրերով որոշված՝ ծնողական ամսական լրավճարներով: Դրանք ամբողջությամբ փոխանցվում են կրթահամալիրի բանկային հաշվին, արտացոլվում կրթահամալիրի ֆինանսական մուտքերում, կրթահամալիրի խորհրդի հաստատած ուղղություններով և չափաքանակներով կատարվող ծախսերում, սահմանված կարգով ներկայացվող ֆինանսական հաշվետվություններում: Կրթահամալիրի ոչ բյուջետային այլ միջոցները՝ օրենքով սահմանված կարգով ստացվող այլ եկամուտներ, նույնպես ուղղվում են հեղինակային կրթական ծրագրի իրականացմանը: Հեղինակային կրթական ծրագրի կազմակերպման, տարածման համար կրթահամալիրը հաստատում է կապեր պետական, հասարակական, միջազգային կազմակերպությունների, անձանց հետ, որոնք աջակցում են ծրագրի կազմակերպման տարբեր խնդիրների լուծմանը: Ամբողջությամբ ոչ պետական հատկացումներով են կատարվել կրթահամալիրի կրթական օբյեկտների ներքին և արտաքին բարելավում-բարեկարգումը, ուսուցողական միջավայրի արդիականացումը, լաբորատոր-արհեստանոցային համակարգի տեխնիկական հագեցումը:

Այս ամբողջն է, որ ապահովել է հեղինակային կրթական ծրագրի բնականոն գործունեությունը, թափանցիկություն, հասցեականություն, կրթահամալիրի խորհրդի իրական գործունեություն, հեղինակային կրթական ծրագրով որոշված ուսումնական նյութական միջավայրի մշտական զարգացում, ուսումնական

միջոցներով հագեցում, նորացում: Այս ձևով նաև ապահովվել է հեղինակային կրթական ծրագրի մատչելիությունը. տարեկան սովորողների 5-10 տոկոսն օգտվել է կրթահամալիրի ծախսային ծրագրերի նախահաշվով որոշված սոցիալական աջակցությունից: Հետազոտող՝ մշակող-փորձարկող-տարածող ուսուցչի համար ստեղծվել է լրավճարների, հավելավճարների, պարգևավճարների բաց, աշխատանքային պայմանագրով երաշխավորված համակարգ:

Հարգելի նախարար, ֆինանսավորման այս ինքնուրույն համակարգը, որ արդարացիորեն գնահատում եք որպես հեղինակային կրթական ծրագրով ձեռքբերում, Ձեզ ներկայացված մանկավարժության ամառային ճամբարներում, շուրջտարյա մենթորական բաց լաբորատորիայում կներկայացնենք հանրակրթական, նախադպրոցական հաստատությունների տնօրեններին, ի թիվս հեղինակային կրթական ծրագրի այլ ձեռքբերումների:

2018-2020-ի համար, պահպանելով կրթահամալիրի կանոնադրական գործունեության ապահովման վերը նշված ուղղությունները, առաջարկել ենք հեղինակային կրթական ծրագրով ձեռքբերումների տարածում՝ կոնկրետ դպրոցներում 5 տարեկանների ուսուցման, անհատական համակարգիչներով-բլոգներով ուսուցման փորձի ներդրման, դպրոց-պարտեզների ցանցի ստեղծման ծրագրեր, որոնք ենթադրում են լրացուցիչ ֆինանսավորում: Ահա ինչու՝ խնդրում ենք սա դիտել որպես 2018-2020 թթ ՀՀ պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի կրթության և գիտության նախարարության հայտում «Փորձարարական մանկավարժական ծրագրերի իրականացում հանրակրթությունում» ծրագիրն ընդարձակելու և «Երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիր» ՊՈԱԿ-ին այդ նպատակով դրամական միջոցներ (լրացուցիչ ֆինանսավորում) հատկացնելու մեր հայտի հիմնավորում:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝

ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ՏՆՕՐԵՆ՝ ***Ա. ԲԼԵՅԱՆ***

info@mskh.am